

ԴԱՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ



ՓՈՔՐԻԿ
ՏԻԿԻՆՆԵՐ

ԼՈՒԻՍԱ ՄԵՅ ԷԼՔՈՌԹ
ՎԵՐԱՊԱՏՈՒՄԸ՝ ՌՈՆ ՌԱՆԴԱԼԻ

ԴԱՍԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ



ՓՈՔՐԻԿ ՏԻԿԻՆՆԵՐ



ԼՈՒԻՍԱ ՄԵՅ ԷԼՔՈԹ

Վերապատումը՝ Ռոն Ռանդալի • Նկարագարդումը՝ Ռոբերտ Դանի
Անգլերենից թարգմանությունը՝ Ալվարդ Ջիվանյանի



ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ ՔՈՒՅՐԵՐԸ

— Սուրբ Ծնունդն առանց նվերների այն չէ,— տրտնջում էր տասնհինգամյա Ջո Մարչը՝ բուխարու կողքին պառկած:

— Չքավոր լինելն անտանելի է,— ավելացրեց նրա ավագ քույրը՝ Մեգը,— հատկապես եթե հայրդ պատերազմի դաշտում է:

Աղջիկների հայրը՝ պարոն Մարչը, Ազգային բանակում քահանա էր: Մայրը՝ Մարգարեթը, որին դուստրերը քնքշանքով Մարմի էին անվանում, հաճախ ասում էր, որ եթե հայրիկն իրեն բոլորովին չի խնայում, իրենք էլ պետք է ինչ-որ բան զոհաբերեն: Այնպես որ, որոշել էին այդ տարվա Սուրբ Ծնունդն առանց նվերների դիմավորել: Սակայն շուտով քույրերն սկսեցին կասկածել՝ արդյոք ճիշտ որոշում էին կայացրել:

— Կարիք չկա ամեն ինչից հրաժարվելու,— հայտարարեց Ջոն,— մենք մեկական դոլար ունենք և կարող ենք ինքներս մեզ նվերներ գնել:

Բեթն ավելի լավ առաջարկ ուներ.

— Եկեք փոխարենը Մարմիին նվեր գնենք:

Որոշումն անցավ միաձայն, և Մարչ քույրերն սկսեցին քննարկել՝ Մարմին ինչ կուզեր, որ իրեն նվիրեին: Այս աշխույժ գրույցի ընթացքում վերադարձավ մայրը:

— Ինչ ուրախ եք,— ասաց նա,— բայց մի բան եմ բերել, որը ձեզ ավելի կուրախացնի՝ նամակ ձեր հայրիկից:


Աղջիկները հավաքվեցին մոր շուրջը, և նա սկսեց նամակը բարձրաձայն կարդալ: Հայրը գրում էր, որ շատ լավ է, և ամեն օր մտածում է իր սիրելիների մասին: Գրում էր նաև, թե որքան է հպարտանալու իր փոքրիկ տիկիներով, երբ տուն վերադառնա:

Հոր նամակը լսելուց հետո աղջիկները որոշեցին իրենց ավելի



գուսպ պահել և այլևս չբողոքել, որպեսզի հայրն իրենցից չհիասթափվեր:

Սուրբ Ծննդի առավոտյան Ջոն արթնացավ ու ձեռքը բարձիտակ տանելով՝ գտավ մոր նվերը. գրքույկ էր՝ «Մի ուխտագնացի կյանքից» վերնագրով: Մյուս աղջիկներին էլ մայրը մեկական օրինակ նվիրել էր: Գիրքը մի մարդու մասին էր, որ ապրում էր հոգսերով լի կյանքով, բայց ունենալով բարի հոգի և իմաստնանալով գործած սխալներից՝ հասել էր իրական երջանկության:



— Մարմին ուզում է, որ այս գիրքն ուղեցույց դառնա մեզ համար,— ասաց Մեզը, և քույրերը համաձայնեցին նրա հետ:

Մարմին չէր երևում:

— Առավոտյան մի խեղճ մարդ եկավ՝ օգնություն խնդրելու,— ասաց Հաննան: Մեզի ծնված օրվանից Հաննան ապրում էր Մարչերի ընտանիքում և ավելի շուտ ընկեր էր, քան ծառա:— Ձեր մայրը գնաց՝ պարզելու, թե ինչով կարող է օգնել:

Աղջիկները քաղցած էին, բայց առանց մոր սեղան չնստեցին: Մեկ ժամ անց նա վերադարձավ:

— Շնորհավոր Սուրբ Ծնունդ,— աղմկեցին աղջիկները,— շնորհակալ ենք գրքերի համար: Մենք դրանք ամեն օր կկարդանք:

— Լավ է, որ ձեզ դուր է եկել: Իսկ հիմա լսե՛ք՝ ինչ եմ ասում: Մեր տնից ոչ հեռու ապրում է մի խեղճ ընտանիք՝ Հյումելները: Մայրը հիվանդ է, ունի վեց սովահար երեխա, մեկն էլ նոր է ծնվել: Կհամաձայնե՞ք Սուրբ Ծննդին ձեր նախաձաշը զիջելու նրանց:

Քույրերը շատ քաղցած էին, բայց Ջոն ու Մեզն արագ սկսեցին բլիթներ ու թարմ հաց փաթաթել, էյմին կաթնահունց ու սեր բերեց, Բեթը հանձն առավ այդ բոլորը տեղ հասցնել:



ՈՒՐԱԽ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

— **Դ**ուք հրեշտակներ եք,— ասաց տիկին Հյումելը, երբ աղջիկները նրանց տուն մտան, ձեռքներին՝ ամեն տեսակի բարիքներ:

Մարմին օգնեց տիկին Հյումելի երեխային հագցնել: Տուն վերադարձան քաղցած, բայց գոհ, որ կարողացան գոնե մի փոքր մխիթարել իրենց հարևաններին:

Տանը մի քիչ հաց ու կաթ ուտելուց հետո աղջիկները Մարմին հանձնեցին նրա նվերները՝ մի գույգ հողաթափ, թաշկինակներ և օձանելիք: Հետո բեմադրեցին իրենց պատրաստած ներկայացումը՝ բազմաթիվ անգամներ հագուստներ փոխելով և ուրախ աղմկելով: Վերջապես եկավ Հաննան և ասաց, որ ընթրիքը մատուցված է:

Աղջիկները կարծում էին՝ Մարմին համեստ ընթրիք է պատրաստել: Պարզվեց՝ նրանց ճոխ հյուրասիրություն էր սպասում՝ երկու տեսակի պաղպաղակ, անուշեղեն, միրգ ու թխվածք:

— Այս ամենը բարի ոգիներն են բերել,— շնջաց էյմին:

— Կամ սուրբ Նիկողայոսը,— ասաց Բեթը:

— Ո՛չ,— ծիծաղեց Մարմին,— պարոն Լորենսը՝ հարևան տանն ապրող տարեց պարոնն է ուղարկել: Նա իմացել է Հյումելների տուն առավոտյան ձեր այցելության մասին և որոշել է ձեզ խրախուսել:

— Հաստատ գիտեմ, այդ թոռն է նրան դրդել նման քայլի,— ասաց Ջոն,— ինձ թվում է՝ նա շատ լավ տղա է և կցանկանար մեզ հետ ընկերանալ, բայց ամաչում է:

— Այո՛, հրաշալի պատանի է,— ասաց Մարմին,— ես ուրախ կլինեմ, որ ծանոթանաք: Իսկ հիմա վայելենք մեր խնջույքը:

— Երանի՛ հայրիկն էլ մեզ հետ լինեք,— հառաչեց Բեթը,— հազիվ թե կռվի դաշտում ուրախ լինի:



Սուրբ Ծննդից հետո Մեզն ու Ջոն հրավիրված էին իրենց ընկերուհու՝ Սալլի Գարդների տուն՝ ամանորյա պարահանդեսի: Աղջիկները հագնելու էին իրենց լավագույն զգեստները: Յավոք, Ջոյի զգեստի վրա՝ մեջքի մասում, այրվածի հետք կար: Նա փորձեց նորոգել զգեստը, բայց, միևնույնն է, երևում էր:

Տեղ հասնելուն պես Մեզին հրավիրեցին պարելու: Ջոն, որ շատ ամաչկոտ էր, թաքնվեց մի որմնախորշում: Ի զարմանս աղջկա՝ այնտեղ մեկն արդեն թաքնվել էր՝ մի պատանի:

— Դու պարոն Լորենսի՝ մեր հարևանի թոռն ես, այնպես չէ՞, — ասաց Ջոն:

— Այո՛, — ժպտաց պատանին, — ինձ կարող ես Լորի անվանել:

Շուտով նրանք հին ու լավ ընկերների պես զրուցում էին ու վարագույրի հետևից նայում պարողներին: Երբ Ջոն սկսեց երաժշտությանը համընթաց դոփել, Լորին նրան պարի հրավիրեց: Ջոն, սակայն, անհարմար էր զգում, որ զգեստի վրա այրված տեղ կա:

— Անհո՛գ եղիր, — ասաց Լորին, — մենք սրահի խորքում կպարենք, որ մեզ չտեսնեն:

Եվ երկուսով սկսեցին ուրախ պոլկա պարել: Պարեցին այնքան, մինչև շնչահեղձ եղան: Հանկարծ եկավ Մեզը՝ ցավից ծամածռված դեմքով:

— Ոտքս ոլորել եմ:

— Պապիկիս կառքն ուր որ է այստեղ կլինի, — ասաց Լորին, — կարող եմ ձեզ տուն տանել:

Քույրերն ուրախությամբ համաձայնեցին. հպարտ էին, որ կառքով են տուն վերադառնում:

— Գիտե՞ք, — ասաց Ջոն ավելի ուշ, երբ արդեն անկողին էին մտնում, — չնայած իմ խանձած շորին ու Մեզի ոլորված ոտքին՝ մենք այսօր հրաշալի ժամանակ անցկացրինք:



ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ

Այդ օրն առատ ձյուն էր տեղացել: Ջոն դուրս եկավ՝ այգու արահետը ձյունից մաքրելու: Երբ նայեց հարևան տան կողմը, տեսավ Լորիին՝ պատուհանի մոտ կանգնած: Աղջիկը ձեռքով արեց.

— Ողջոյն, ինչպէս ես:

— Շատ լավ, շնորհակալ եմ,— ասաց Լորին,— ամբողջ շաբաթ տնից դուրս չեմ եկել. մրսած էի: Շատ եմ ձանձրանում: Եկ ինձ տեսության, մայրիկիցդ թույլտվություն վերցրու և արի:



Մայրիկը թույլ տվեց, և Ջոն գնաց իր նոր ընկերոջն այցելության: Նրանք խոսեցին Ջոյի ընտանիքի մասին: Լորին պատմեց իր պապիկից, որը գրեթե ամբողջ օրն զբաղված էր ընթերցանությամբ: Երբ Ջոն ասաց, որ ինքն էլ կարդալ

շատ է սիրում, Լորին հրավիրեց նրան գրադարան, որ լի էր ամեն տեսակի գրքերով ու նկարներով: Նկարներից մեկը Լորիի պապիկի դիմանկարն էր: Ջոն երկար նայեց նկարին ու ասաց.

— Ես պապիկիցդ վախենում էի, բայց նկարում նա շատ բարի աչքեր ունի:

— Շնորհակալ եմ,— արձագանքեց մի ձայն:

Ջոն վախեցած շրջվեց ու տեսավ պարոն Լորենսին՝ Լորիի պապիկին՝ իրենց հետևում կանգնած:

— Ուրեմն հիմա ինձնից չես վախենում,— ասաց նա՝ ձեռքը մեկնելով:

Ջոն սեղմեց նրա ձեռքը, ժպտաց և շնորհակալություն հայտնեց Սուրբ Ծննդին ուղարկած համեղ նվերների համար: Պարոն Լորենսն ասաց, որ Ջոն ու քույրերը կարող են իրենց հյուր գալ, երբ կամենան: Երեկոյան Ջոն, ուրախ ցատկոտելով, տուն էր վերադառնում ու մտածում. «Տուն հասնեմ ու ամեն բան Մեզին պատմեմ»:



Շուտով պարոն Լորենսը ինքը հյուր եկավ տիկին Մարչին և հանդիպեց բոլոր քույրերին՝ բացառությամբ Բեթի, որը դեռ ամաչում էր մռայլ ծերունուց: Իրականում Բեթը շատ էր ցանկանում գնալ նրանց տուն, գիտեր, որ մեծ դաշնամուր ունեն, և կարող էր նվագել: Երբ պարոն Լորենսն իմացավ, որ Բեթը երաժշտություն շատ է սիրում, նրա գլխում մի միտք ծագեց. այցելություններից մեկի ժամանակ նա տիկին Մարչին ասաց, որ իրենց տանը դաշնամուր կա:

— Տանը ոչ ոք չի զբաղվում այդ գործիքով, — ասաց նա, — գուցե աղջիկներից մեկը կուզենա՞ երբեմն գալ ու նվագել:

Բեթը, որ այդ պահին, սենյակի անկյունում նստած, կար էր անում, որոշեց մասնակցել խոսակցությանը:

— Ես սիրով կգամ, — ասաց աղջիկը, — եթե վստահ եք, որ Ձեզ չեն խանգարի:

— Ամենևին, սիրելիս, — ասաց պարոն Լորենսը, — ես իմ աշխատասենյակում կլինեմ, այնպես որ ինձ բոլորովին չես անհանգստացնի: Կարող ես գալ և սրտիդ ուզածի չափ նվագել:

Գրեթե ամեն օր Բեթը գնում և դաշնամուր էր նվագում. պարոն Լորենսը նրան նոտաներ էր տալիս: Բեթն այնքան երջանիկ էր, որ պարոն Լորենսին իր պատրաստած հողաթափերը նվիրեց: Ի պատասխան՝ ծերունին Բեթին մի փոքրիկ դաշնամուր ուղարկեց: Առաջ այն պատկանել էր նրա թոռնուհուն, որն, ավանդ, փոքր տարիքում մահացել էր:

Ի զարմանս բոլորի՝ երբ պարոն Լորենսը կրկին հյուր եկավ, Բեթն ընդառաջ վագեց, փարվեց նրան ու համբուրեց: Ծերունու մռայլությունն ասես չբացավ: Մի պահ նրան թվաց՝ թոռնուհին է վերադարձել: Բեթն այլևս ծերունուց չէր վախենում:



ԷՅՄԻԻՆ ՎԻՐԱՎՈՐՈՒՄ ԵՆ

Մի օր Էյմին Մեգին խոստովանեց, որ պարտքեր ունի:

— Դասարանի աղջիկներին մեկ դյուժին թթու դրած կիտրոն եմ պարտք,— ասաց նա:— Երբ ուսուցիչը չի նայում, աղջիկներն ուտում են դրանք: Ով նրանց դուր է գալիս, նրան էլ են տալիս, բայց պարտավոր ես հետո վերադարձնել: Ինձ շատ են հյուրասիրել, իսկ վերադարձնել չեմ կարող, որովհետև փող չունեմ:

Մեգը Քինգզերի ընտանիքում տնային դաստիարակչուհի էր աշխատում և քրոջը մի փոքրիկ գումար տվեց: Հաջորդ օրը Էյմին թթու դրած կիտրոններ գնեց: Դասընկերուհիներն իսկույն փոխեցին իրենց վերաբերմունքը, նույնիսկ Ջեննի Սնոուն, որ Էյմին կոպիտ խոսքեր էր ասել: Էյմին չէր մոռացել նրա անսրտությունն ու մի կարճ գրություն ուղարկեց նրան. «Կարիք չկա այդքան քաղաքավարի լինել: Միևնույնն է, ոչինչ չես ստանա»: Ջեննին, սաստիկ նեղված, ուսուցչին՝ պարոն Դեյվիսին, զեկուցեց կիտրոնների մասին: Ուսուցիչն Էյմին կանչեց իր մոտ և բոլորի ներկայությամբ մի քանի անգամ հարվածեց նրա ձեռքի ափին: Աղջիկն ամոթից շառագունեց: Երեկոյան նա մորը պատմեց կատարվածի մասին:

— Դու խախտել ես սահմանված կանոններն ու պատժվել,— ասաց մայրը,— բայց պարոն Դեյվիսի մեթոդներն ինձ այնքան էլ դուր չեն գալիս: Ես մեկ այլ դպրոց կփնտրեմ քեզ համար, իսկ մինչ այդ կսովորես տանը՝ Բեթի հետ:

Էյմին շատ դուր եկավ մոր որոշումը:

— Երանի բոլոր աշակերտուհիները հեռանան, և այդ սարսափելի դպրոցը փակվի:

Մի շաբաթ օր Մեգն ու Ջոն պատրաստվում էին Լորիի հետ թատրոն գնալու:



— Ինձ էլ տարեք ձեզ հետ,— խնդրեց Էյմին,— վաղուց եմ ուզում նայել «Յոթ դղյակները»:

Ջոն ու Մեգը հիշեցրին Էյմին, որ նրան չեն հրավիրել, բայց Էյմին իրենն էր պնդում:

— Խնդրում եմ, ինձ էլ տարեք: Տանը բան չկա անելու, իսկ ես ուզում եմ զվարճանալ:

Մեգն արդեն համաձայնում էր, բայց Ջոն ասաց.

— Եթե նա գա, ես կմնամ տանը: Ամեն տեղ քիթը խոթում է: Էյմին սկսեց լաց լինել.

— Դու դեռ կզղջաս ասածիդ համար, Ջոն Մարչ:

Երեկոյան, երբ Ջոն ու Մեգը թատրոնից վերադարձան, Էյմին նստած կարդում էր: Նա հայացքն անգամ չկտրեց գրքից՝ քույրերին ողջունելու համար: Ջոն բարձրացավ իր սենյակ և իսկույն նկատեց, որ նոթատետրը, որտեղ գրի էր առնում իր պատմվածքները, անհետացել է: Նա նետվեց հյուրասրահ:

— Տեսրս չե՞ք տեսել,— հարցրեց նա:

— Ո՛չ, չենք տեսել,— միաժամանակ պատասխանեցին Մեգն ու Բեթը:

— Էյմի, տեսրս քեզ մոտ է,— հարցրեց Ջոն:

— Ո՛չ, ինձ մոտ չէ, որովհետև ես այն բուխարին եմ նետել,— հանգիստ պատասխանեց Էյմին:

Ջոն գույնը գցեց, հետո հարձակվեց քրոջ վրա ու սկսեց թափահարել նրան:

— Ստո՛ր աղջիկ,— ճչաց նա,— ես երբեք չեմ կարողանա այդ նույն պատմությունները նորից գրել: Մինչև մահս չեմ ների քեզ:

Ջոն որոշեց այլևս չխոսել Էյմիի հետ: Տրամադրությունը

Ջոն որոշեց այլևս չխոսել Էյմիի հետ: Տրամադրությունը





բարձրացնելու համար նա Լորիի հետ սահադաշտ գնաց: Էյմին արդեն զոջում էր արածի համար և ուզում էր ներողություն խնդրել քրոջից: Չմուշկները վերցնելով՝ նա Ջոյի հետևից սահադաշտ գնաց: Էյմին տեսնելով՝ Ջոն երեսը շրջեց: Նույնիսկ երբ տեսավ, որ Էյմին դժվարությամբ է սառույցի վրա առաջ գնում, մտածեց. «Թող ինքն իր մասին հոգ տանի»:

Լորին սահելով մոտեցավ Ջոյին:

— Սառույցը գետի այս մասում շատ բարակ է,— ասաց տղան,— ափին մոտ սահիր:

Այդ պահին ինչ-որ բան Ջոյին ստիպեց շրջվել, և նա սարսափով տեսավ՝ ինչպես է սառույցը ջարդվում, և քույրն ընկնում է ջրի մեջ: Լավ է, որ Լորին ժամանակին հասավ, և նրանք երկուսով Էյմին դուրս քաշեցին սառը ջրից: Բարեբախտաբար, նա չէր վնասվել: Աղջկան արագ փաթաթեցին Լորիի վերարկուի մեջ և տուն տարան:

Երբ Էյմին արդեն պառկեցրել էին տաք անկողնում ու վերմակներով ծածկել, մայրը վիրակապեց Ջոյի ձեռքերը, որոնք սառույցից քերծվել էին:

— Էյմին կարող էր խեղդվել,— հեկեկում էր Ջոն,— և դա իմ մեղքն էր: Ես չեմ ուզում այսքան դյուրագրգիռ լինել:

— Որքան էլ փորձես, չի ստացվի,— ասաց Մարմին,— արդեն քառասուն տարի է՝ փորձում եմ, բայց ապարդյուն:

Լսելով, որ իր բարի, մեղմ մայրը նույնպես անթերի չէ, Ջոն մի փոքր հանգստացավ: Ավելի ուշ նա գնաց տեսնելու՝ Էյմին ինչպես է: Էյմին ձեռքերը պարզեց և ջերմ ժպտաց: Քույրերն իրար ամուր գրկեցին, և ամեն վատ բան մոռացվեց:



ՄԵԳԸ՝ ՓԱՌԱՄՈՒ

Ձմեռն անցավ: Գարնանային արձակուրդներին Մեգին և ընկերուհուն՝ Սալի Գարդներին, երկու շաբաթով հրավիրեցին նրանց մյուս ընկերուհու՝ Էնի Մոֆիթի տուն: Քույրերն իրար էին անցել, օգնում էին Մեգին հավաքվելու:

— Երանի կարողանայի բոլորիդ հետս տանել,— հառաչեց Մեգը:



Առաջին օրերին Մոֆիթների ընդարձակ ու շքեղ տանը Մեգն իրեն մի փոքր անհարմար էր զգում:

Բայց Էնին ու նրա քույրերը շատ ուշադիր էին Մեգի հանդեպ, անգամ մի քնքուշ մականուն հորինեցին աղջկա համար՝ Դեյզի՝ Մարգարտածաղիկ: Օրիորդները զբաղված էին գնումներով, զբոսանքով, աղջկական բամբասանքով

ու նման այլ բաներով: Մեգը նույնիսկ սկսեց նախանձել ընկերուհիներին. այդպիսի նորաձև զգեստներ ու գեղեցիկ իրեր նա, իհարկե, չուներ: Իր համեստ ու մաշված հագուստները Մեգին շատ անշուք էին թվում:

Մի երեկո Մեգը պատահմամբ լսեց՝ ինչպես է տիկին Մոֆիթն իր ծանոթուհու հետ քննարկում հաջորդ շաբաթ կազմակերպվող պարահանդեսը:

— Երիտասարդ Լորենսին հրավիրել եմ Դեյզի Մարչի համար,— ասում էր տիկին Մոֆիթը,— որքան հասկացա, աղջկա մայրը ծրագրեր ունի նրանց հաշվով:

— Շատ էլ հարմար ընտրություն է,— պատասխանեց ընկերուհին,— ասում են՝ լավ ունևոր են:

Մեգը լսածին չէր հավատում. ինչպես կարող էին մտածել, որ





իր թանկագին, ազնիվ մայրը հաշվենկատ կին է: Մի կերպ ար-
ցունքները զսպելով՝ Մեզը ձևացրեց, որ ոչինչ չի լսել, ու վերա-
դարձավ ընկերուհիների մոտ:

Աղջիկներն անհամբեր սպասում էին պարահանդեսին: Հրա-
շալի առիթ էր նոր զգեստներն ու զարդերը ցուցադրելու և բարե-
տես երիտասարդների հետ պարելու համար:

— Ես վարդագույն մետաքսից նոր զգեստս եմ հագնելու, —
ասաց Սալլին: — Դո՛ւ ինչ ես հագնելու, Դեյզի:

— Իմ բամբակյա սպիտակ շորը, — պատասխանեց Մեզը:

— Այսպես չեղավ, մի բան կմտածենք, — ասաց Սալլիի քույրը՝
Բելը: — Դու կարող ես իմ երկնագույն մետաքսե զգեստը հագնել:
Մենք քեզ Մոխրոտիկի նման կզուգենք: Ես քո փերի կնքամայրը
կլինեմ:

Հաջորդ օրն աղջիկները գանգրացրին Մեզի մազերը, հագց-
րին մետաքսե զգեստ, նաև նվիրեցին շողշողուն ականջօղեր,
արծաթե վզնոց ու ապարանջան: Վերջում շուրթերն ու այտերը
վառ կարմիր ներկեցին: Մեզն անհամբեր սպասում էր՝ երբ է Լո-
րիին հանդիպելու: Բայց երբ տղան տեսավ նրան, խոժոռվեց:

— Դուրդ չե՞մ գալիս, — հարցրեց Մեզը:

— Ո՛չ, — անկեղծ ասաց Լորին: — Ես չեմ ուզում, որ այդպես
պճնվես: Ինձ դուր է գալիս իսկական Մեզը՝ նա, ում միշտ ճա-
նաչել եմ:

Աղջկան հանկարծ թվաց՝ ինքը սարսափելի հիմար է, և շատ
ամաչեց: Նա հասկացավ, որ մյուս աղջիկներն իր հետ խաղա-
ցել էին. ասես տիկնիկ լիներ: Էնի Մոֆիթի աշխարհն իրենը չէր:
Մեզը Լորիին խնդրեց եղածի մասին մորն ու քույրերին ոչինչ չա-
սել: Դեյզիին կարելի էր մոռանալ:



ՓՈՐՉԱՆՔ ԽՈՒՆԱՆՈՑՈՒՄ

Գարունն անցավ: Եկավ ամառը: Դպրոցում դասերն ավարտվեցին: Քինգզերի ընտանիքը մեկնեց ծովափ՝ հանգստանալու, և Մեգը ազատ էր: Ջոն, որ օգնում էր հորաքույր Մարչին, նույնպես ազատ էր, քանի որ հորաքույրը հյուրընկալվում էր ընկերուհիների տանը: Եվ քույրերը որոշեցին միառժամանակ անգործ մնալ. անգամ Մարմին խնդրեցին իրենց ազատել տնային հոգսերից:

— Փորձե՛ք մեկ շաբաթ պարապ մնալ, — ասաց մայրը, — վստահ եմ՝ շաբաթվա վերջում գղջալու եք:

Առաջին մի քանի օրն աղջիկները հրաշալի ժամանակ անցկացրին: Ջոն այնքան էր կարողում, որ աչքերը կարմրել էին: Մեգը նորանոր զարդարանքներ էր կպցնում իր զգեստներին, Էյմին նկարում էր, Բեթը՝ դաշնամուր նվագում: Մի քանի օր անց աղջիկները սկսեցին ձանձրանալ ու նյարդայնանալ: Մայրիկն իրավացի էր: Ուստի շաբաթ օրը որոշեցին նրան անակնկալ մատուցել և հատուկ նախաճաշ պատրաստել: Ջոն, որ երբեք կերակուր չէր եփել, այդ օրը որոշեց հաց թխել և խեցգետին ու ծնեբեկ պատրաստել: Անուշեղենի փոխարեն ելակ էր մատուցելու: Մյուսները պետք է տունը կարգի բերեին:

Այն, ինչ տեղի ունեցավ, կատարյալ աղետ էր: Ջոն նախ այրեց հացը, հետո խեցգետինն ու ծնեբեկն այնքան եփեց, որ հալվեցին: Վերջում էլ ելակի վրա շաքարի փոխարեն աղ լցրեց:

Բայց աղջիկը լաց չեղավ, այլ սկսեց բարձրաձայն ծիծաղել: Մյուսները հետևեցին նրա օրինակին: Նախաճաշն ավարտվեց ուրախ քրքիջով: Քույրերը որոշեցին ամառվա մնացած օրերին այլևս անգործ չմնալ:

— Պարտքս լինի՝ արձակուրդներին կերակուր պատրաստել սովորեմ, — խոստացավ Ջոն:

Ողջուն սիրելի ընթերցող: Այս գրքի էլեկտրոնային տարբերակը պատրաստել է 1915.info կայքը ընթերցողի խնդրանքով: Դուք ևս կարող եք առաջարկել գրքեր և մենք անվճար կթվայնացնենք դրանք Ձեզ համար:



ԼՈՐԵՆՍԻ ՃԱՄԲԱՐԸ

— **Ս**իրելի Ջո,— գրում էր Լորին,— ես Անգլիայից հյուրեր ունեմ և հրավիրել եմ նրանց բնության գրկում խնջույքի: Առաջարկում եմ քեզ ու քույրերիդ միանալ մեզ:

Խնջույքի օրը հրաշալի եղանակ էր:

— Բարի գալուստ Լորենսի ճամբար,— քույրերին տեսնելուն պես բացականչեց Լորին:

Նա դաշտում մեծ վրան էր խփել՝ հյուրերին արևից պաշտպանելու համար: Տղան հպարտ ներկայացրեց իր ընկերներին: Քեյթ Վոնը Մեգից մի փոքր մեծ էր, նրա զույգ եղբայրները՝ Ֆրեդն ու Ֆրենքը, Ջոյի տարիքին էին: Գրեյսը՝ Քեյթի կրտսեր քույրը, շատ արագ ընկերացավ Բեթի և Էյմիի հետ: Այդտեղ էր նաև Լորիի ուսուցիչը՝ Ջոն Բրուքը:



Նրանք կրոկետ խաղացին, հետո վայելեցին համեղ նախաձաշը: Վերջում քաշվեցին վրանը:

— Հարցրո՛ւ Քեյթին՝ ինչ խաղեր գիտի,— Ջոն խնդրեց Լորիին:— Եվ ավելի ուշադիր եղիր. նա քո հյուրն է:

— Ես կարծում էի՝ նա ընկերանալու է պարոն Բրուքի հետ, իսկ Բրուքն, ինչ եկել էք, միայն Մեգի հետ է զրուցում:



Լորին իրավացի էր: Մեգն ու պարոն Բրուքը մի անկյուն էին քաշվել ու տարվել զրույցով: Բրուքը հայացքը Մեգից չէր կտրում: Օրվա վերջում բոլորը հոգնած էին, բայց գոհ: Միասին հավաքեցին վրանն ու մնացած իրերը:

— Ի՛նչ լավ օր էր,— ասաց Քեյթը Բրուքին:

— Համաձայն եմ,— պատասխանեց Բրուքը՝ նայելով հեռացող Մեգի ու նրա քույրերի հետևից:

Հոկտեմբերյան մի երեկո Լորին քաղաք էր իջել՝ սուսերամարտի պարապմունքի: Հանկարծ նա տեսավ՝ ինչպես է Ջոն



ատամնաբույժի ցուցանակով մի շենք մտնում: Լորին որոշեց սպասել աղջկան: Տասը բուպե անց Ջոն դուրս եկավ՝ այտերը մի փոքր շիկնած:

— Սարսափելի էր, — հարցրեց տղան:

— Այնքան էլ չէ, — պատասխանեց Ջոն:

— Իսկ շահտ ցավեց, — ասաց Լորին:

— Ես ատամնաբույժի մոտ չեի, — ծիծաղեց Ջոն, — այլ մի հարկ վերև՝ թերթի խմբագրությունում:

— Եվ ինչ նպատակով, — հետաքրքրվեց Լորին:

— Գաղտնիք է, — ասաց Ջոն խորհրդավոր ձայնով, — խոստացիր ոչ ոքի չասել:

Լորին խոստացավ, և աղջիկը պատմեց նրան, որ մի պատմվածք է տարել շաբաթաթերթի խմբագրություն:

— Անպատճառ կտպագրեն, Ջոն, — գոչեց Լորին: — Քո գրածները հանձարեղ են:

Շաբաթ առավոտյան Ջոն հասցրեց մյուսներից առաջ վերցնել թերթերը և նետվեց հյուրասրահ: Մի քանի բուպե անց եկան քույրերը:

— Ինչ ես կարդում, — հարցրեց Մեգը:

— Պատմվածք, — անտարբեր ձայնով ասաց Ջոն, — ուզում եք բարձրաձայն կարդամ:

Իհարկե ուզում էին: Քույրերին պատմությունը շատ դուր եկավ:

— Իսկ ո՞վ է հեղինակը:

— Հեղինակը ձեր քույրն է, — հանդիսավոր հայտարարեց Ջոն և երջանկությունից շողալով՝ ցույց տվեց թերթի էջը, որտեղ գրված էր. «Մրցակից գործընկերներ. հեղինակ՝ օրիորդ Ջոզեֆին Մարչ»:



ՀԵՌԱԳԻՐ

Նոյեմբերին սառն ու մռայլ եղանակ էր: Աղջիկների տրամադրությունը նույնպես մռայլ էր: Միայն երբ մայրը տուն էր գալիս, աշխուժանում էին: Մի երեկո մոր հետ եկավ նաև Լորին՝ քույրերին իսկապես ուրախացնելով:

Հագիվ էր մայրը նստել, երբ դռան զանգը հնչեց: Ներս եկավ Հաննան՝ ձեռքին հեռագիր: Հեռագիրը կարդալով՝ մայրը գույնը զգեց: Լորին շտապեց նրան մի բաժակ ջուր բերել: Ջոն բարձրաձայն կարդաց հեռագիրը.

«Տիկի՛ն Մարչ, Ձեր ամուսինը ծանր վիրավորվել է:

Շտանյ եկեք: Ս. Հեյլ, Բլանք հիվանդանոց, Վաշինգտոն»:

Աղջիկները հուզվեցին: Մայրը բոլորին գրկեց: Նա խնդրեց Մեգին վազել պարոն Լորենսի մոտ ու հարցնել՝ արդյոք նա կարող է մի քիչ մթերք տալ իրեն. գիտեր, որ հիվանդանոցում ուտելիքը սուղ է: Հետո մի երկտող գրեց, որ Լորին հասցնի հորաքույր Մարչին:

— Պարտքով փող վերցնեմ, որ կարողանամ գնացքի տունս գնել,— բացատրեց նա,— եթե պետք է, հպարտությունս մի կողմ կթողնեմ ու անգամ ողորմություն կխնդրեմ:

Բերթը վերադարձավ՝ ձեռքին զամբյուղով ուտելիք և գինի, որ պարոն Լորենսն էր ուղարկել: Մեկ բոպե անց զանգը կրկին հնչեց: Մեզը դուռը բացեց. Ջոն Բրուքն էր:

— Շատ եմ ցավում հորդ հետ կատարվածի համար,— ասաց նա,— եկել եմ՝ մայրիկիդ առաջարկեմ, որ իրեն մինչև Վաշինգտոն ուղեկցեմ:

— Որքան բարի եք մեր հանդեպ,— ասաց Մեգն ու իսկույն



ներս հրավիրեց նրան: Այդ տխուր պահին Բրուքի առաջարկը մեծ օգնություն էր թե՛ մոր, թե՛ աղջիկների համար:

Սկսեցին պատրաստվել սպասվող ճանապարհորդությանը: Մեզն արդուկեց մոր հագուստը, Բեթն օգնեց մայրիկին իրերը հավաքելու, իսկ Ջոնն ինչ-որ տեղ անհետացավ:

Շուտով վերադարձավ Լորին՝ բերելով հորաքույր Մարչի ուղարկած երկտողն ու մի քիչ փող: Մայրիկը կարդաց երկտողն ու մոայլվեց. հորաքույր Մարչը գրում էր, որ ինքը միշտ էլ դեմ է եղել, որ եղբայրը մասնակցի պատերազմին, բայց իրեն լսող չկար... Այնուհանդերձ, ճանապարհաձախար նա ուղարկել էր:

Քիչ անց վազելով եկավ Ջոնն՝ ձեռքին թղթադրամների խուրձ:

— Ահա քսանհինգ դոլար, — ասաց նա հուզված ձայնով, — սա էլ իմ ներդրումն է:

— Որտեղից քեզ այդքան փող, — հարցրեց մայրիկը, — պատասխանի փոխարեն Ջոնն հանեց գլխարկը: Բոլորը ախ քաշեցին. աղջկա խիտ, շագանակագույն մազերը կարճ կտրված էին:


— Քո մազերն այնքան գեղեցիկ էին, — բացականչեց Մեզը:

— Ինչո՞ւ կտրեցիր, — լաց եղավ Էյմին:

Բեթը քնքշորեն շոյեց քրոջ գլուխը:

— Այնքան էի ուզում հայրիկի համար մի լավ բան անել, — բացատրեց Ջոնն, — և երբ անցնում էի վարսավիրանոցի կողքով, ցուցափեղկում կեղծամներ տեսա՝ վրան գնապիտակներ, և որոշեցի մազերս կտրել:

Մարմին գրկեց Ջոյին. իր դուստրը հանուն սիրո մեծ զոհաբերություն էր արել: Այդ գիշեր վաղ պառկեցին քնելու, որ գալիք ծանր օրվա համար ուժ ունենային:





ԴԺՎԱՐ ՕՐԵՐ

Հաջորդ առավոտյան աղջիկները մնաս բարով ասացին մայրիկին ու պարոն Բրուքին:

— Կարծես ամբողջ տունը հեռացավ մեզնից,— տրտում ասաց Մեգը:

Հիմա, երբ մայրիկը գնացել էր, նա ևս կուզեր տանը մնալ և օգնել, բայց էյմին ու Բեթը պնդեցին, որ իրենք Հաննայի օգնությամբ գլուխ կհանեն տան գործերից, իսկ Մեգն ու Ջոն թող սովորականի նման աշխատանքի գնան:

Ամբողջ շաբաթ աղջիկները, իրենց չխնայելով, աշխատեցին՝ սպասելով լուրերի: Բրուքը հաճախ էր գրում, և երբ կարդում էին, որ պարոն Մարչի ինքնազգացողությունը վատ չէ, թեթևություն էին զգում, և լարվածությունը թուլանում էր:

Եվս մեկ շաբաթ անցավ: Աղջիկները սկսեցին մի փոքր թերանալ իրենց պարտականությունների մեջ: Ջոն մրսել էր, և քանի որ հորաքույրը վախենում էր նրանից վարակվելուց, աղջիկը չգնաց նրան այցելելու, այլ մնաց տանն ու զբաղվեց ընթերցանությամբ: Էյմին սկսեց ավելի շատ ժամանակ հատկացնել նկարելուն, քան տան գործերին կամ կերակուր պատրաստելուն: Իսկ Մեգը տարված էր Ջոն Բրուքի նամակները վերընթերցելով:

Միայն Բեթն էր շարունակում զբաղվել տան գործերով, մայրիկի փոխարեն այցելում էր Հյումելների ընտանիքին: Մի օր նա խնդրեց, որ քույրերից մեկն իր փոխարեն գնա Հյումելների տուն, որովհետև շատ հոգնած էր, և գլուխը ցավում էր: Բեթն իր սենյակ բարձրացավ, որպեսզի պառկի: Ջոն գնաց նրա հետևից. քույրը դեղերի դարակում ինչ-որ բան էր փնտրում, աչքերը կարմրած էին. ասես ջերմություն ուներ:

— Ինչ է պատահել,— բացականչեց Ջոն:

— Հյումելների երեխան կարմրուկ էր հանել,— թույլ ձայնով



ասաց Բեթը,— նա գրկումս մահացավ: Վախենամ՝ ես էլ եմ վարակվել:

Ջոն շտապ կանչեց Հաննային, հրավիրեցին բժիշկ Բենգին: Բեթը, իրոք, կարմրուկով հիվանդ էր: Էյմին կարմրուկով չէր հիվանդացել, և որպեսզի չվարակվեր, նրան ուղարկեցին հորաքույր Մարչի տուն, մինչև քույրը կլավանար:

Անցան երկար ու ծանր օրեր: Հաննան գրեթե չէր հեռանում Բեթի անկողնուց: Բժիշկը գալիս էր ամեն օր: Քույրերը որոշեցին մայրիկին չգրել Բեթի հիվանդության մասին, մինչև նա լավանար: Բայց Բեթը չէր լավանում: Օրերն անցնում էին. նա անդադար ջերմում էր, անկողնում անհանգիստ շուռումուռ գալիս:

Աղջիկները բոլորվին հուսահատվել էին: Մի՞թե կորցնելու էին իրենց թանկագին քրոջը: Ջոն որոշեց մայրիկին հեռագրել: Եկավ նաև Լորին: Բրուքը նրան գրում էր, որ պարոն Մարչի առողջությանն այլևս ոչինչ չի սպասում: Բայց աղջիկներն այնքան մտահոգ էին, որ անգամ այդ նորությունը նրանց չուրախացրեց:

— Ես մի ուրիշ լուր էլ ունեմ,— ասաց Լորին:— Երեկ հեռագիր եմ ուղարկել տիկին Մարչին և խնդրել, որ գա: Կեսգիշերից քիչ անց գնացքն այստեղ կլինի:

— Լորի, այնքան շնորհակալ ենք քեզ,— բացականչեց Ջոն ու ամուր գրկեց նրան:

Գիշերը Ջոնը Բեթին անկողնում անշարժ պառկած գտավ: Բեթի՝ մինչ այդ ջերմությունից կարմրած դեմքն այժմ գունատ էր: Կարծելով, թե քույրը մահացել է, Ջոն արթնացրեց Հաննային, որը վազեվազ եկավ: Նա այտը հպեց հիվանդ աղջկա ճակատին, ու դեմքը պայծառացավ:

— Ջերմությունն իջել է,— ասաց նա,— փառքդ շատ լինի, Աստված:






ԷՅՄԻՒ ՏԱՌԱՊԱՆ ՔՆԵՐԸ

Էյմին, ճիշտ է, հեռու էր Բեթի հիվանդության հետ կապված խնդիրներից, բայց նրա կյանքը հորաքույր Մարչի տանը նույնպես քաղցր չէր: Հորաքույրն ամենևին վատ չէր վարվում նրա հետ: Մարչ քույրերից Էյմին էր նրա սիրելին, բայց ծեր տիկինն աշխատում էր ցույց չտալ իր զգացմունքները, որ աղջիկը հանկարծ երես չառնի:

Էյմին շատ էր նեղվում հորաքրոջ տան խիստ կարգուկանոնից: Նա պարտականությունների մի ամբողջ ցանկ ուներ՝ լվանալ թեյի գավաթները, փայլեցնել գդալներն ու արծաթե թեյնիկը, սրբել հյուրասենյակի կահույքի փոշին: Երեկոներն էլ ստիպված էր լսել հորաքրոջ երկար ու անհետաքրքիր պատմություններն անցած-գնացած օրերի մասին: Աղջիկը կարոտում էր հայրական տան ջերմությանն ու զվարթությանը: Միակ բանը, որ Էյմիի կյանքն այստեղ տանելի էր դարձնում, Լորիի այցերն էին և հորաքրոջ ֆրանսուհի աղախնի՝ Էսթերի հետ մտերմությունը: Վերջինս մի բարեսիրտ աղջիկ էր և հաճախ Էյմիին ցույց էր տալիս հորաքրոջ զարդերը: Մի օր Էսթերը տեսավ, թե ինչպես է Էյմին հիանում հորաքրոջ մատանիներով:

— Գիտե՞ս, որ հորաքույրդ որոշել է փիրուզե քարով այդ փոքրիկ մատանին քեզ նվիրել, երբ տուն վերադառնաս, եթե շարունակես քեզ լավ պահել ու գոհացնել նրան:

Մատանին իսկապես գեղեցիկ էր, և Էյմին որոշեց այդ օրվանից անտրտունջ կատարել իր բոլոր պարտականությունները: Բայց անգամ մատանուն տիրանալու հեռանկարը չերջանկացրեց նրան: Գիշերը՝ քնելուց առաջ, Էյմին աղոթում էր, աղոթում



նաև հիվանդ քրոջ համար: Ինչին էին պետք աշխարհի ամենագեղեցիկ իրերը, եթե հանկարծ կորցնեիր սիրելի քրոջը:

Առաջինը, ում Բեթը տեսավ՝ արթնանալով իր տազնապալի քնից, մայրիկն էր: Բեթի հիվանդանալուց հետո Մեզն ու Ջոն առաջին անգամ հանգիստ քնեցին:

Երբ արթնացան, արդեն երեկո էր, և մայրիկը գնացել էր Էյմիին այցելելու: Մորը տեսնելով՝ Էյմին ուրախությունից իրեն կորցրեց: Նա պատմեց՝ որքան է աղոթել Բեթի առողջության համար, պատմեց նաև իր դժվարությունների մասին: Մայրը Էյմիի մատին նկատեց փիրուզե քարով մատանին:

— Հորաքույր Մարչն է այս առավոտ ինձ նվիրել, — բացատրեց աղջիկը: — Նա ասում է, որ հպարտանում է ինձնով, և դեմ չէր լինի, որ միշտ իր հետ ապրեի:

— Կարծում եմ՝ դեռ փոքր ես նման մատանի կրելու համար, — ասաց մայրը:


— Գուցե, — պատասխանեց Էյմին, — բայց ես այն հատուկ նպատակով եմ դրել: Այն ինձ Բեթին է հիշեցնում, թե որքան բարի ու անձնվեր է նա: Եսասիրությունն իմ մեծ թերությունն է, և մատանին կօգնի ինձ ազատվելու դրանից:

— Եթե այնքեզ կօգնի ավելի լավը դառնալու, կարող ես կրել, — ժպտաց մայրը:

Հետո համբուրեց Էյմիի ճակատն ու ասաց, որ ստիպված է վերադառնալ Բեթի մոտ:

— Նա դեռ լրիվ չի ապաքինվել, և տուն վերադառնալն առայժմ վտանգավոր է, բայց շուտով դու էլ կգաս:

Էյմին գիտեր, որ դժվար է լինելու, բայց պետք է համբերեր:





ՀՈՐԱՔՈՒՅՐ ՄԱՐԶԸ ԽՆԴՐԻՆ ԼՈՒԾՈՒՄ Է ՏԱԼԻՍ

Այդ երեկո մայրիկն ու Ջոն, միասին նստած, զրուցում էին: Մայրիկը զգուշորեն հարցրեց Ջոյին.

— Ինչ ես կարծում, Ջոն Բրուքը դ՞նո՞ւ է գալիս մեր Մեգին:

— Վստահ չեմ,— ասաց Ջոն,— բայց Բրուքը Մեգին շատ է հավանում:

— Իրավացի ես,— ասաց մայրը,— երբ Վաշինգտոնում էինք, նա ինձ ու հորդ ասաց, որ սիրում է Մեգին և կուզենար ամուսնանալ նրա հետ: Բրուքը լավ մարդ է, բայց ինձ թվում է՝ Մեգը դեռ շատ երիտասարդ է ամուսնանալու համար:

— Եվ փանք Աստծո, — ասաց Ջոն, — չէի ցանկանա, որ ինչ-որ մեկը քրոջս ինձնից խլեր:

Իսկ մի քանի օր անց՝ երեկոյան, երբ Մեգը, հյուրասենյակում նստած, կարդում էր, եկավ Ջոն Բրուքը:

— Ներս եկեք,— հուզված ասաց Մեգը:— Հիմա մայրիկին կկանչեմ:

— Խնդրում եմ, մի՛ գնա,— ասաց Բրուքը,— ես եկել եմ քեզ տեսնելու: Հուսամ՝ ինձնից չես վախենում:

— Ի հարկե ոչ,— պատասխանեց Մեգն ու սաստիկ կարմրեց:

— Մե՛գ,— շարունակեց Բրուքը,— պետք է քեզ ասեմ՝ ինչ եմ զգում: Ես սիրում եմ քեզ և ուզում եմ, որ միասին լինենք:

— Ինձ վաղ է նման բաների մասին մտածելը,— կմկմաց Մեգը՝ ձեռքը հետ քաշելով:— Ավելի լավ է՝ գնաք և ինձ հանգիստ թողնեք:

Ջոն Բրուքը, սիրտը կոտրված, դուրս գնաց՝ անցնելով հորաքույր Մարչի կողքով, որը հենց նոր էր ներս մտել:

— Այստեղ ինչ է կատարվում,— հարցրեց հորաքույրը: Տեսնելով Մեգի շիկնած դեմքը՝ նա շարունակեց:— Նա քեզ առաջարկություն է արել:



Մեզը չպատասխանեց, և հորաքույր Մարչը շարունակեց:

— Միայն չասես, որ ընդունել ես նրա առաջարկը: Աղքատի մեկն է. իրեն հազիվ կարողանա պահել, ուր մնաց՝ կնոջ մասին հոգ տանի: Եթե նրա հետ ամուսնանաս,— զգուշացրեց հորաքույր Մարչը,— փողերիցս մի փենի անգամ չես ստանա:

Մեզը զայրույթից կարմրատակեց. ինչպես կարող է հորաքույրը ենթադրել, որ իրեն միայն փողն է հետաքրքրում:

— Ես կամուսնանամ, ում հետ ցանկանամ, հորաքո՛ւյր, իսկ Ձեր փողերը նվիրե՛ք, ում ուզում եք,— համարձակ ասաց Մեզը:

— Հիմար չլինե՛ս,— ասաց հորաքույրը,— եթե ունևոր մարդու հետ ամուսնանաս, ոչ մի բանի կարիք չես ունենա: Քեզ ավելին է հասնում, քան այդ Բրուքն է:

— Անգամ եթե հավերժ սպասեմ, նրանից լավին չեմ գտնի,— ասաց Մեզը:— Ջոնը բարի է, խելացի, համարձակ ու տաղանդավոր: Ես հպարտ եմ, որ նա ինձ է ընտրել:

— Տեսնում եմ՝ քեզ խոսք հասկացնել չի լինում,— ասաց հորաքույրը,— ես լավ կանեմ՝ գնամ:

Եվ նա սենյակից արագ դուրս եկավ: Մեկ վայրկյան անց վերադարձավ Բրուքը: Նա դեռ չէր հասցրել հեռանալ և դռան հետևից ամեն ինչ լսել էր:

— Շնորհակալ եմ, որ պաշտպանեցիր ինձ,— ասաց նա Մեզին,— և որ գոնե անտարբեր չես իմ նկատմամբ:

— Մինչև հորաքրոջս գալն ինքս էլ չէի գիտակցում այդ:

— Մենք միասին երջանիկ կլինենք, չէ՞, Մե՛զ,— ասաց նա:

— Ի հարկե կլինենք,— ժպտաց աղջիկը:

Սուրբ Ծննդին նախորդող շաբաթներն անցան անհոգ ու երջանիկ: Բեթը կազդուրվում էր: Մայրիկը հույս ուներ, որ պարոն Մարչը հունվարին կվերադառնա:



Եկավ Սուրբ Ծնունդը: Աղջիկները պատրաստվում էին նվերներ փոխանակելու: Բեթը պատուհանից դուրս նայեց. Ջոն ու Լորին բակում ձնեմարդ էին պատրաստել: «Ինչ երջանիկ եմ: Եթե միայն հայրիկն էլ վերադառնար»,— մտածեց աղջիկը: Երևի մյուսներն էլ նույն բանն էին մտածում: Հենց այդ պահին Լորին դուռը բացեց:

— Ահա մեկ ուրիշ նվեր Մարչ ընտանիքի համար,— հայտարարեց նա ու չքացավ:

Նրա տեղում հայտնվեց թիկնոցի մեջ փաթաթված մի բարձրահասակ տղամարդ:

— Հայրիկ,— ձյաց Բեթը:

Պարոն Մարչին դիմավորեցին ցնձալի աղաղակներով, ուրախության արցունքներով և կարոտալից համբույրներով: Ավելի ուշ եկան Լորին, Բրուքը, պարոն Լորենսը, և բոլորը միասին ձաշեցին:

— Այս տարի այնքան շատ բաներ տեղի ունեցան,— ասաց Ջոն:


— Լավ տարի էր,— ասաց Մեգը՝ ամոթխած մի հայացք ձգելով Բրուքին:

— Շատ դժվար տարի էր,— ասաց Էյմին՝ նայելով փիրուզե քարով իր մատանուն:

— Ես ուրախ եմ, որ տարին վերջացավ,— ասաց Բեթը,— և որ հայրիկը վերադարձավ:

— Իսկ ես երջանիկ եմ, որ վերջապես տանն եմ,— ասաց պարոն Մարչը,— իմ սիրելի կնոջ ու չորս փոքրիկ «տիկիների»


հետ:





ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Լուիսա Մեյ Էլբոթը ծնվել է 1832 թ. ԱՄՆ-ում՝ Փենսիլվանիայում:
 Ընտանիքը համեստ էր ապրում: Լուիսան սկսել է աշխատել վաղ հասակից.
 նախ՝ որպես տնային ուսուցչուհի, հետո՝ որպես գրող: Հասուն տարիքում
 Էլբոթը դառնում է երդվյալ ֆեմինիստ: Նա առաջին կանանցից էր,
 որ ընտրություններին մասնակցելու իրավունք ստացավ և քվեարկեց
 Մասաչուսեթսի նահանգում՝ Կոնկորդի դպրոցական խորհրդում:
 «Փոքրիկ տիկիներ» վեպն ամբողջությամբ հիմնված է Էլբոթների
 ընտանիքի պատմության վրա, իսկ Ջո Մարչի նախատիպը ինքը՝ հեղինակն
 է: Նա էլ Ջոյի նման ըմբոստ հոգի ուներ, սիրում էր
 սովորել և իր մտքերը համարձակ արտահայտել:
 Լուիսան մահացել է 1888 թ. մարտի 6-ին Բոստոնում:



«Դասական մատենաշարում» լույս են տեսել նաև.

Գանձերի կղզին • Օգի կախարդը • Հայդի
 Թոմ Սոյերի արկածները • Սև գեղեցկաբաշը
 Շվեյցարացի Ռոբինզոնները • Քսան հազար լյո ջրի տակ



Դիզայներ՝ Իգի Լենգրիջ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
 Խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
 Համակարգչային էջադրումը՝ Արևիկ Հակոբյանի
 Վերստուգող սրբագրիչ՝ Նարինե Ղուկասյան

ՀՏԴ 820 (73) Էլբոթ
 ԳՄԴ 84.4 ԱՄՆ
 Է 280

Էլբոթ Լուիսա Մեյ
 Է 280 Փոքրիկ տիկիներ: Դասական մատենաշար / Լ. Մեյ Էլբոթ: Վերապատումը՝ Ռ. Ռանդալի:
 Անգլ. թարգմ. Ա. Զիվանյանի; Նկ.՝ Ռ. Դանի. — Եր.: «Զանգակ» հրատ., 2023— 48 էջ:

ՀՏԴ 820 (73) Էլբոթ
 ԳՄԴ 84.4 ԱՄՆ

Առաջին հրատարակությունը՝ 2013 թ.
 ISBN 978-9939-68-065-1

Original title: *LITTLE WOMEN*
 First published in 2011 by QED Publishing,
 an imprint of The Quarto Group
 All rights reserved
 © 2011 Quarto Publishing plc
 © "Zangak-97" LLC (Armenian translation), 2013
 © «Զանգակ-97» ՍՊԸ (թարգմանության համար), 2013

Printed in China

Բոլոր իրավունքները պաշտպանված են:
 Սույն հրատարակության որևէ հատված չի կարող
 վերարտադրվել մեխանիկական, էլեկտրոնային,
 լուսապատճենահանման, տեսագրման և/կամ այլ
 եղանակով՝ առանց հրատարակչի գրավոր
 համաձայնության:

«ԶԱՆԳԱԿ» հրատարակչություն
 ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
 Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
 Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
 Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak